# «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՇՈՒՐՋԸ

## ՀՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ԳՆԴԱՊԵՏ ԿՈԼՈՍՈՎԻՆ[1])

ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ լուսավորչական եկեղեցու գործերի Խորհուրդը խորին գոհունակության զգացմունքով ընդունեց տանկային գնդի զորամասի հրամանատար փոխգնդապետ Վոյնովսկու հաղորդագրությունը հայ հոգևորականության և հավատացյալների միջոցներով կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմի մարտական սխրագործությունների մասին, որ ցուցաբերում է մեր Մեծ Հայրենիքի պաշտպանության գործում:

Անարգ թշնամու դեմ մղվող Հայրենական պատերազմում Հայ ժողովրդի անձնվեր զավակները ռուս քաջարի մարտիկների և Միության եղբայրական մյուս ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի տված հանդես բերին մինչև ուժ կատարյալ հաղթանակի և թշնամու վերջնական ջախջախման համար: Հայրենական պատերազմում տարած իրենց փայլուն հաղթանակներով նրանք բազմապատկեցին մեր պանծալի բանակի հզոր զենքի փառքը և բարձր պահեցին Միության ժողովուրդների պատիվը:

Ռազմաճակատի յուրաքանչյուր հաղթանակի լուրը, Հայ ժողովրդի կորովի զավակների արիությունը, խիզախությունը, նրանց անօրինակ հերոսական սխրագործությունները և անձնվեր պայքարը հանուն մեր Մեծ Հայրենիքի ազատության և ֆաշիզմի զնդանում տառապող բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման անհուն բերկրանքով է հիշում Հայ ժողովուրդը:

Փառապանծ Կարմիր Բանակի մարտական հաղթանակները ապահովելու և հարազատ Հայրենի հողը ֆաշիստական ավազակներից մաքրելու համար իր ողջ եռանդը և ընդունակությունները նվիրաբերեց հայ բանվորը, կոլտնտեսականը, ուսուցիչը, գրողը, արվեստի ու կուլտուրայի մշակը: Ռազմաճակատի հաղթանակներով ոգեշնչված նրանք թիկունքում կրկնապատկելով իրենց ուժերը պատվով կատարում են իրենց պարտականությունները և ռազմաճակատին մատակարարում այն բոլորը, որ անհրաժեշտ է թշնամուն ջախջախելու և վերջնական հաղթանակը արագացնելու համար:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմի այդ հաղթանակները վկայում են այն անհուն սերը, որ հայ ժողովուրդը տածում է դեպի իր հարազատ Հայրենիքը, և այն դառն ատելությունը, որ զգում է հայը դեպի նողկալի թշնամին, գերմանական զավթիչները:

---

1) Գնդապետ Կոլոսովի նամակը ուղղված ընկ. Ս. Ն. Հովհաննիսյանին տպագրված է ամսագրիս նախորդ համարում:

*Աշխարհի բոլոր մասերի՝ Նյու-Յորքի, Ֆրեզնոյի, Թեհրանի, Թավրիզի, Սպահանի, Կահիրեի, Երուսաղեմի, Կիպրոսի և այլ երկրների հայրենասեր հայերը բերկրանքով ու հպարտության վսեմ զգացմունքով համակված կկարդան իրենց մուծումներով կառուցված տանկային շարասյան արիասիրտ մարտնչողների հաղթանակները, որոնք փառքի լուսապսակով զարդարում են թե՛ իրենց, և թե՛ հարազատ ժողովրդին ու անվեհերության լուսաշող ավանդը թողնում գալիք սերունդներին:*

*Մոտ է ժամը, երբ Կարմիր Բանակի անվեհեր զորականների հաղթ բազուկների հարվածների տակ կջախջախվի արյունարբու ֆաշիզմը, և պանծալի Կարմիր Բանակը ազատության ձիթենին ձեռին խաղաղություն կբերի համայն աշխարհին:*

**ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից հայ Լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի նախագահ**
**Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**